ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 4 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով «Մարշալ Բաղրամյան» համատիրության անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Մարշալ Բաղրամյան» համատիրությունը 2011թ. սեպտեմբերի 23-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.7-րդ և 118.8-րդ հոդվածների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, վերջինիս 8-րդ, 18-րդ, 19-րդ և 31-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող իրավադրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը, թեև դիմումում իսպառ բացակայում են համապատասխան և անհրաժեշտ իրավական հիմնավորումները: Այլ կերպ, դիմողը բավարար իրավաբանական փաստարկներով և եզրահանգումներով պատշաճ կերպ չի հիմնավորել վիճարկվող իրավանորմերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը, ինչը դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է: /«Սահմանադրական դատարանի մասին»

ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ և 7-րդ մասեր/: Ավելին, դիմողը վիճարկելով մատնանշված իրավադրույթների սահմանադրականությունը՝ ըստ էության, բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց, այլ կերպ՝ դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն սահմանադրական դատարանին:

Փաստորեն, դիմողը փորձել է դատական ակտերի իրավական հետեւանքները վերագրել խնդրո առարկա իրավանորմերի սահմանադրականության խնդրին /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետեր/:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Մարշալ Բաղրամյան» համատիրության անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

4 հոկտեմբերի 2011 թվականի
ՍԴԿՈ/2-12